

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ - 95



«ԿՅԱՆՔՆ ԻՆՔՆԻՆ ՍԻՐԵԼԻ Է»

Ամենայն հայոց բանաստեղծուհի, հասարակական գործիչ, հրապարակախոս, Հայաստանի Ազգային գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Սիլվա Կապուտիկյանը հունվարի 20-ին կդառնար 95 տարեկան:

րիներն էլ հավասար սիրելի են, քանի որ կյանքն ինքնին սիրելի է»,- մի անգամ նշել է անվանի բանաստեղծուհին: Սիլվա Կապուտիկյանը ծնվել է Երեւանում: Սովորել է Երեւանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: 13 տարեկանում գրել է իր առաջին բանաստեղծությունը, որը տպագրվել է «Պիոներ կանչ» թերթում: Այնուհետև 1941-ին ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, 1950-ին՝ Մոսկվայի Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացները:

Կապուտիկյանն իր պոեզիայում եւ հրապարակախոսական գործերում անդրադարձել է հայրենիքին, հայ ժողովրդին եւ հայոց լեզվին: Բանաստեղծուհուն մշտապես հուզել է սփյուռքի հայերի ճակատագիրը, ինչպես նաեւ հայապահպանության խնդիրը: Կապուտիկյանի ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: Բանաստեղծուհին մի շարք մրցանակների դափնեկիր է: Սահագել է 2006 թվականին:

Կարճ եւ մտերմիկ բանաստեղծություններ (ընդ որումը Սիլվա Կապուտիկյանինն է):

* * *

Դժվար է գալը, դժվար գնալը,
Դժվար՝ լռելը, դժվար՝ ճշալը,
Դեռ հավատալն է ամենից դժվար,
Ավելի դժվար՝ չհավատալը:

* * *

Ծիծաղեցի թե լացի՝


Փրկում չեղավ քեզանից,
Անիծեցի, օրհնեցի՝
Փրկում չեղավ քեզանից
Ամբողջ մի կյանք ամեն տեղ
Խոսքս բացի ամենքին,
Խոսքս չասած զնացի՝
Փրկում չեղավ քեզանից:

ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ - 100

ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՁԵՆԵՐԸ...

Հայ գրականության դասական Բենիկ Սեյրանյանի (1913-2003) ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանը, որ լրացավ ու նշվեց 2013-ի դեկտեմբերին, նշանավորվեց հրատարակչական մեծ ճաշակով ծեւավորված, «Կամուրջ» գրական-մշակութային կազմակերպության մատենաշարով, կազմակերպության ղեկավար բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի նախաձեռնությամբ, իբրեւ երախտիքի խոսք՝ անվանի գրողի ստեղծագործությունների՝ «Հին Թիֆլիսի ձեները» գողտրիկ ժողովածուի լույսընծայմամբ:

Թբիլիսիում տպագրված այդ գիրքը Բենիկ Սեյրանյան գրողի, լրագրողի («Վրաստան» թերթում աշխատել է գրեթե 70 տարի, մինչեւ կյանքի վերջը) տարբեր ժամանակներում գրած պատմվածքների, նովելների եւ մանրապատումների փոքրիկ ընտրանի է: Այստեղ համատեղված գործերի ներքին կապը ստեղծվում է, Սիլվա Կապուտիկյանի խոսքով ասած՝ «Մարդկանց ու ժողովուրդների միջեւ սիրո ու բարեկամության մթնոլորտ հաստատելու» Սեյրանյանական ազնիվ միտումով:



Հին Թիֆլիսի ձեները

Գրքին կցված են ժամանակակից գրական աշխարհի ներկայացուցիչների՝ Բենիկ Սեյրանյան գրողին նվիրված հակիրճ, ընդգրկուն բնորոշումները, սկսած գրականության դասականների՝ Սիլվա Կապուտիկյանից եւ Մորիս Փոցխիշվիլուց, վերջացրած ժամանակակից հայտնի գրողներ Վահագն Դավթյանով եւ Ջանսուր Չարկվիանով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՅԱՆ

«ԿԱՍՈՒՐՋ» - 2013

ՄՊԱՍՎԱԾ ՇՆՈՐՀԱՆՊԵՏ



Երեկոն, որ տեղի ունեցավ Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում, հունվարի 18-ին, սպասված էր... Դա, տասնամյակների պատմությունն ուսած, գրական շրջաններին քաջածանոթ, Վրաստանի գրողների միության եւ «Կամուրջ» գրական-մշակութային հասարակական կազմակերպության տարեգրքի հեղթական՝ 2013 թվականի ժողովածուի շնորհանդեսն էր:

Նորընծա «Կամուրջ»-2013-ը, ինչպես միշտ, իր «Արձակ եւ չափածո էջեր» շարքում միավորել է Վրաստանի հայ գրական դաշտի ներկայացուցիչներին: Եվ ոչ միայն նրանց: Գրքի՝ «Օտարագիր, բայց ոչ օտար», «Մեր հայրենակիցները Հայաստանում եւ սփյուռքում», «Գրական միջօրեականներ» խորագրերի էջերում տեղ են գտել Հայաստանում, սփյուռքում ստեղծագործող եւ՝ Վրաստանի օտարագիր հայ հեղինակները:

Տարեցտարի իր բովանդակությունն ընդլայնող տարեգրքի վերջին համարը ունի «Դասական էջեր», «Գրականագիտություն», «Մանկական գրականություն», «Հրապարակագրություն», «Թերթելով «Կամուրջի» արխիվը», «Կամուրջի» հարցազրույցը», «Ուսումնասիրություններ, հետազոտություններ» եւ այլ շարքեր: Իսկ ավանդական՝ «Վրաց ժամանակակից արձակի եւ պոեզիայի վապետներ», «Թարգմանական էջեր» խորագրերի ներքո տեղ գտած հեղինակների միջոցով՝ ընթերցողը հաղորդակցվում է վրաց հեղինակներին: Վերջին տարիների գրական առավել նշանակալի իրադարձությունները «Կամուրջ»-2013-ը վեր է հանել «Հայ գրատպությունը 500 տարեկան է», «Մայաթուրյան սրահ» խորագրերով: «Գրքի ամենաողջունելի» «Առաջին անգամ «Կամուրջում» խորագիրը, այս անգամ եւս, իր գիրկն է ընդունել վիրահայ երիտասարդ ստեղծագործողին:

Այս ամենով հանդերձ, ի պատասխան հարցի, թե այսօր ո՞րն է տարեգրքի նպատակը, գրքի խմբագիր, բանաստեղծ, թարգմանիչ, «Կամուրջ» գրական-հասարակական կազմակերպության ղեկավար Անահիտ Բոստանջյանն առաջաբանում նշում է. «Վերջին տարիներին մեր խնդիրն է վիրահայոց առանցքի շուրջ համախմբել ամենայն հայոց գրականության ուժերը... Մեր խնդիրը նաեւ իսկական ընթերցող դաստիարակելն է...»:

Երեկոն վարող Անահիտ Բոստանջյանն իր ողջույնի խոսքում անդրադարձավ տարեգրքի անցած, հաճախ դժվարահարթ ճանապարհին եւ՝ այդ ճանապարհին որդեգրած՝ «հայ-վրաց գրականությունների երթեւեկը պահպանելու»:

Նելու» նրա անշեղ հավատամքին, իր շնորհակալությունը բերեց գրքի հովանավորողներին: Երեկոյին ներկա հյուրեր՝ ՎԳՄ-ի նախագահ Մաղվալա Գոմաշվիլին, գրող Ռեւազ Միշվելաձեն, բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնիսյանը, գրող, նկարիչ Ռեզո Ադամիան, «Ցիսկարի» հանդեսի գլխավոր խմբագիր Բադաթեր Արաբալիին, մանկավարժ Մանանա Կարապետյանը, Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտյոմ Կիրակոզովը եւ Երեկոն իր օրհնությամբ եզրափակեց:



կող, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, իրենց շնորհավորական խոսքում, նշեցին «Կամուրջ» ավանախի մեծագույն դերը՝ վիրահայ գրական ավանդների պահպանման, գրական նոր սերունդի աճեցնելու գործում եւ այդ ուղղությամբ՝ նրա ներկայիս խմբագիր Անահիտ Բոստանջյանի ներդրած վաստակը:


Երեկոյին ներկա էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Դովհաննես Մանուկյանը՝ տիկնոջ եւ հնգամյա որդու՝ Ալեքսանդրի հետ:

ՎԳՄ-ի մրցանակային հանձնաժողովի որոշմամբ՝ Անահիտ Բոստանջյանին շնորհվեց Նիկո Նիկոլաձեի անվան մրցանակ՝ «Կամուրջ» տարեգրքի խմբագրման համար:

Երեկոն համեմվեց երաժիշտ-դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Եսայի Աբովյանի՝ Բուլախովի եւ Ֆոմինի ռոմանսների սեփական մշակումների, վիրահայ երգիչներ Աննա Պողոսովայի, Հենրիխ Պետրոսյանի ու Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի աշակերտներ Լիզա Թորոսյանի եւ Լիկա Մարգարյանի գեղարվեստական ելույթներով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՅԱՆ

ԳՅՈՒՄՐԵՅԻ ՍԱՄՎԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆՎԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆԹԵՐՃՈՂՆԵՐԻՆ



Վերջերս պոեզիայի սիրահարներին հիանալի նվեր մատուցեց «Կամուրջ» գրական-մշակութային հասարակական կազմակերպությունը. «Թարգմանական գրականության գրադարան» մատենաշարով լույս տեսավ հայերենից վրացերեն թարգմանված եւս մեկ բանաստեղծական ժողովածու: Գրքի հեղինակն այս անգամ Հայաստանի Շիրակ աշխարհի ճանաչված ու Հայաստանում հայտնի բանաստեղծներից է՝ 15 գրքի հեղինակ Սամվել Մարգարյանը, ով նաեւ Գյումրիում լույս տեսնող «Շիրակ» թերթի խմբագիրն է, Շիրակի մարզի երազավորս գյուղում կառուցված Բագրատունյաց փառքի հուշադրուհիի հիմնադիր կառուցողը, իսկ թարգմանիչը՝ մատենաշարի հիմնադիր, ՀԿ նախագահ բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանը:

Հետաքրքիր ու հարուստ է Սամվել Մարգարյանի բարդ, միաժամանակ մատչելի ու պարզ լի ու հարգ բանաստեղծական աշխարհը՝ իրականի ու երազայինի կենդանի համադրությամբ, ընթերցողի հետ անկեղծ զրույց ծավալելու աստվածատուր շնորհով: Քաղաքացիական բարձր կենսադիրք, խոր հայրենասիրություն, արմատների ու ակունքների, մասնավորապես, Էրզրի՝ կորուսյալ հայրենիքի հանդեպ որդիական ի խորոց սրտի նվիրվածություն, աստեղաց ման միշտ լույս տալու ձգտում, մարդասիրություն, ահա նրա բերթվածների առանցքը: Քերթվածներ, որոնցից գրեթե յուրաքանչյուրից ցուլանում է մարդկային բարի ժպիտը, սիրող սիրտը եւ Վեհի ու Գեղեցիկի զգացողությամբ ապրող պոետական մի հոգի: Հուզիչ է բանաստեղծությունների այն շարքը, որոնց մեջ Մարգարյանի միացող սիրտն է լալիս մեր կորուսյալ հայրենիքի համար՝ Կարսի ու Վանի, Անիի ու Մուշի... Երբ կարդում ես դրանք, որ արգասիք են Էրզրի աչքերով տեսած բա-

նաստեղծի խոհերի. թվում է, նրա հետ միասին ճամփորդում ու մեկ- մեկ տեսնում ես դրանք ու ցավում, միաժամանակ, հպարտանում նախնայաց հերոսական անցյալով... Եվ ոչ միայն ներկա Հայաստանի ու Արեւմտյան Հայաստանի սիրով է բաբախում պոետի սիրտը. նա հատկապես է սիրում իր դրկից երկիրն ու նրա ժողովրդին՝ Վրաստանն ու վրացիներին, ու այդ սիրուց է ծնվել հենց վրացերեն գիրք ունենալու նրա բուռն ցանկությունը, ինչպես առաջաբանում գրում է Անահիտ Բոստանջյանը: Կարդում ես ահա «Ամաթի» եւ «Երկու աստղեր» բանաստեղծությունները եւ մի անգամ էլ համոզվում, թե որքան է սիրում մարդուն Մարգարյանը, թե որքան թանկ է նրա համար եղբայրական վրաց ժողովուրդն ու նրա մշակույթը, ինչ բարձր է գնահատում նա մեր ազգերի դարավոր բարեկամության բարի ավանդույթներն ու ինչ սիրով փորձում իր բաժին աղյուսն էլ դնել մեր միասնական կամրջի հիմնաքարին: Իսկ այս ամենը սնունդ են առնում մերձավորի եւ ընդհանրապես մարդու հանդեպ մի հոգեցունց սիրուց, որը, ինչպես իր առաջաբանում նշում է գրքի խմբագիր, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոմաշվիլին, նրա պոեզիայի սնուցող աղբյուրն է, եւ որի խորապես գիտակ-

ցումից է, որ բանաստեղծի համար եւս, ինչպես ամեն հավատացյալ մարդու, թանկ է Քրիստոսի պատգամը՝ Սիրեցեք զմիմեանս... ու նաեւ մյուսը՝ Սիրի թշնամուր... Այս ամենն է ահա գեղեցիկ պահում կյանքը, եւ բանաստեղծի կոչումն էլ հենց կյանքը գեղեցկացնելու ու սիրով պահելու մեջ է: Իսկ գրքի թարգմանչի մասին խոսելիս՝ դարձյալ մեջբերենք Մաղվալա Գոմաշվիլու խոսքերը. «Անահիտ Բոստանջյանի գրչին ոչ մեկ թարգմանական ժողովածու է պատկանում, որոնք վրաց ընթերցողի կողմից ընդունվել են սիրով ու հավանությամբ»: Եվ այնուամենայնիվ, ո՞րն է այս գրքի, այս մատենաշարի, թարգմանության ամենակարեւոր նշանակությունն ու առթելությունը: Պատասխանը մեկն է ու աներկբա. կառուցել հոգեւոր օդային կամուրջներ մեր դրկից ժողովուրդների միջեւ, միմյանց ավելի մոտիկից ծանոթանալու հնարավորություն ստեղծել, քանզի հոգեւոր կապերը, որոնք հյուսված են խղճից, բարուց, սիրուց ու զորակցությունից, ոչինչ են ոչ ոք ի գործու չէ քանդել: Երբեք: Երեւի հենց այս իրողությունն էլ ծնունդ է տվել մի այլ իրողության, որի մասին ուզում են անպայման նշել խոսքիս վերջում: Բանն այն է, որ «Թարգմանական գրականության

գրադարան» արդեն 5-6 տարվա պատմություն ունեցող մատենաշարը, որի քաղցր պտուղերից մեկն էլ, ասեմ շնորհակալությամբ, իմ հայրենե ժողովածուն է, եւ որն առ այսօր իր բարի կամքով հովանավորում էր ինքը՝ Անահիտ Բոստանջյանը, արդեն գտել է իր ազնվագույն մեկնեմասին: Դա ամերիկաբնակ բանաստեղծ Ավիլ Դերենց-Դեիրմենջյանն է, որի գիրքը եւս վերջերս ստացավ վրացի ընթերցող... Նա, ինչպես երախտագիտությամբ եւ ուրախությամբ հավաստում է Անահիտ Բոստանջյանը, այսուհետեւ միշտ կաջակցի մատենաշարով հրատարակվող գրքերի հրատարակությանը... Շնորհակալություն այդ բարի ու տաղանդաշատ հայորդուն այս բարի առաքելությամբ համար: Եվ մենք, եւ սերունդները դա երբեք չենք մոռանա: Մերն ու բարեգթությունը ամմոռանալի են: Շնորհակալություն ասեմք նաեւ մյուսներին, ովքեր աշխատել են գրքի վրա՝ Անի Գրիգորյան, Դալի Զվարթիշվիլի, Մանանա Գորգիշվիլի: Եվ նորից ու կրկին հեղինակին՝ գրքում նաեւ իր կենսագրությամբ ու գործունեությամբ ներկայացված Սամվել Մարգարյանին, միանալով բոլոր նրանց, ովքեր բարձր են գնահատում նրա պոեզիան Հովի.Շիրազ («Ս.Մարգարյանի «Շիրակ» բանաստեղծությունը հայ պոեզիայի մարգարիտներից է».), Ավիլ Իսահակյան, Լեւոն Անանյան, Արա Արթյան... Իսկ ձեզ, սիրելի վրացի ու հայ ընթերցողներ, բարու արգասիք այս գրքի բարի վայելում:

ՄԱՐԻՆԱ ԿԻՐԱՎՈՍՅԱՆ
բանաստեղծուհի

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԱՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓԱՉԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՆԿԱԶԵՅՎԵԼ Է

Հայաստանի կառավարությունը կշարունակի փոխհատուցել սոցիալապես անապահով ընտանիքների սպառած գազի գնի մի մասը: Այդպիսով՝ գազի սակագինը մեկ խոր.մ-ի համար 156 դրամի փոխարեն անապահով ընտանիքների համար կկազմի 100 դրամ: Այդ մասին Հայաստանի կառավարության միստում հայտարարեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Տիգրան Սարգսյանը հանձնարարեց Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների ու Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարներին պատրաստել համապատասխան որոշում եւ ներկայացնել այն կառավարությանը, որպեսզի հնարավոր լինի շարունակել սոցիալապես խոցելի խավերին օժանդակելու եւ նրանց

համար գազի գնի բարձրացում թույլ չտալու քաղաքականությունը: Որոշումը կառավարություն կնքվալայցվի մեկ շաբաթվա ընթացքում: Բնական գազի եւ էլեկտրաէներգիայի համար սահմանված նոր սակագներն ուժի մեջ են մտել 2013թ. հուլիսի 7-ից: Սպառողներին վաճառվող բնական գազի համար ամսական մինչեւ 10



հազար խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը սահմանվել է 156 դրամ սպառված յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի համար:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՅՉԻ ՀՐԱԺԵՆՏԻ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ



Սերժ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Ֆիլիպ Լեֆորին՝ Հայաստանի եւ Եվ-

նային անվտանգությանն ու խաղաղությանը նպաստելուն ուղղված ջանքերի համար եւ

Հունվարի 21-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Հարավային Կովկասի ճգնաժամների հարցերով Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորին, ով Հայաստան էր ժամանել հրաժեշտի այցով:

րամի ու թյան միջեւ համագործակցության խորացման գործում նրա ներդրման, ինչպես նաեւ տարածաշրջանային անվտանգությանն ու խաղաղությանը նպաստելուն ուղղված ջանքերի համար եւ

հաջողություն մաղթել հետագա աշխատանքում: ԵՄ հատուկ ներկայացուցչի հետ հանդիպմանն անդրադարձ է կատարվել նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին: Նույն օրը կայացավ նաեւ Հայաստանի արտգործնախա-

րար Էդվարդ Նալբանդյանի եւ Ֆիլիպ Լեֆորի հանդիպումը: Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները, անդրադարձել տարածաշրջանային հակամարտությունների եւ դրանց հանգուցալուծման նպատակով գործադրվող ջանքերին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՆԱՏՕ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆՈՒՄ

Հայաստանի Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը հունվարի 21-22-ը մասնակցեց Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնականում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի Եվրատլանտյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ), Աֆղանստանում իրականացվող կայունության ուժերի (ԱՅԱՄԱՖ) եւ նոր՝ «Վճռական աջակցություն» գործողության, ինչպես նաեւ Կոստոյի ուժերի (ԿՅՈՐ) ձեռնարկով գլխավոր շտաբի պետերի միստերին:

Նիստերի ընթացքում քննարկվել են ՆԱՏՕ-ի կողմից Աֆղանստանում եւ Կոստովոյում իրականացվող գործողությունների ընթացքը եւ առաջիկա ծրագրերը: Բրյուսել կատարած այցի ընթացքում գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը

հանդիպում է ունեցել Եվրոպայում դաշնակցային ուժերի գլխավոր հրամանատար, ԱՄՆ ռազմաօդային ուժերի գեներալ Ֆիլիպ Բրիդլովի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությանն առնչվող

ընթացիկ հարցեր: Յուրի Խաչատուրովը առանձնազորույցներ է ունեցել նաեւ մի շարք երկրների գործընկերների հետ:



ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԶԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը չի բացառում, որ հետագա բանակցությունների ընթացքում, նկատի ունենալով Հայաստանի դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ, գործընթացներ կամ զարգացումներ լինեն ՌԴ-ում Հայաստանի քաղաքացիների գտնվելու կարգի փոփոխության հետ կապված:

Էդվարդ Նալբանդյանն ասուլիսին նման տեսակետ հայտնեց 2014թ. հունվարի 1-ից Ռուսաստանի Դաշնությունում ուժի մեջ

մտած «ՌԴ-ից ելքի եւ ՌԴ մուտքի մասին» եւ «ՌԴ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» դաշնա-

յին օրենքներում կատարված փոփոխությունների առնչությամբ: Համաձայն նոր կարգի, 2014թ. հունվարի 1-ից սկսած, ՌԴ առանց վիզա մուտքի իրավունք ունեցող պետությունների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) քաղաքացիները կարող են ՌԴ տարածքում մնալ 90 օր յուրաքանչյուր 180 օրվա ընթացքում: Դա նշանակում է, որ այդ պետու-

թյունների քաղաքացիները Ռուսաստանում 90 օր գտնվելուց հետո այլեւս չեն կարող հատել Ռուսաստանի սահմանը եւ անմիջապես հետ վերադառնալ, ինչպես դա ամուսն էին նախկինում: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերոհիշյալ կարգը խախտողների համար սահմանվել է ՌԴ մուտք գործելու արգելք 3 տարի ժամկետով:

ՀԵՐՈՍԻՆ ՀՈՒՂԱԿԱՎՈՐԵՑԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՎՈՎ



Հերոս կրտսեր սերժանտի հուղարկավորությանը ներկա էին Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ ԶՈՒ ղեկավար կազմը, ՀՀ ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը, քաղա-

Հակառակորդի դիվերսանտների դեմ հերոսաբար մարտնչած եւ զոհված կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանի աճյունը հունվարի 22-ին պատվով պահակախմբի, հազարավոր մարդկանց ու զինվորական նվազախմբի հնչյունների ուղեկցությամբ իր վերջին հանգրվանը գտավ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում: Նրա մարմինը հողին հանձնվեց պատվով համազարկերի ներքո:

բական, պետական գործիչներ եւ այլք: Հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը դարաբաղա-աղբեղանական զորքերի շփման գծի երկու ուղղությամբ աղբեղանական կողմը դիվերսիոն խմբերի ներթափանցման փորձ է կատարել: ԼՂՀ զինված ուժերի առաջապահ ստորաբաժանումները երկու ուղղություններով էլ անցել են կազմակերպված պաշտպանության եւ, հակառակորդին

պատճառելով զգալի մարդկային եւ նյութական կորուստ, հետ շարտել ելման դիրքերը: Բռնված փոխհրաժգության արդյունքում հակառակորդի կողմից ստացած հրազենային վիրավորումից զոհվեց կրտսեր սերժանտ Արմեն Լեւոնի Հովհաննիսյանը: Միջադեպի մանրամասները պարզելու համար տարվում է քննություն:

ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ ՆԿԱԶԵԼ Է

Ինչպես տեղեկացանք Հայաստանի ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչությունից, Հայաստանում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է 16,2%-ով (2012թ.՝ 15776, 2013թ.՝ 18333):

Դրա հետ մեկտեղ առանձնապես ծանր հանցագործությունների թիվը նվազել է 16,7%-ով (156-130): Նվազել են նաեւ սպանության (50-48), դիտավոր-

ությանը առողջությանը վնաս պատճառելու (1640-1412), կոռուպտի (247-184), տրանսպորտային միջոց փախցնելու (61-51) եւ խուլիգանության (189-

185), այդ թվում՝ գենդի գործադրմամբ (33-32) դեպքերը: Հանցագործությունները հիմնականում աճել են բնակարանային գողության (1054-1323), յուրացման կամ վատման (179-210), ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու (960-1050) դեպքերով: Հանցագործությունների ընդհանուր թվաքանակի աճի

պարագայում՝ Հայաստանում 2,3%-ով նվազել է քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը (11719-11446): Տեղի է ունեցել կրկնա-հանցագործությունների զգալի նվազում՝ 114-ով (441-327): 0,7%-ով (80,1%-ից 80,8%) աճել է առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Հայաստանի կառավարությունը հաստատեց Մաքսային միությանը եւ Բելոռուսի, Ղազախստանի եւ Ռուսաստանի միասնական տնտեսական տարածքին Հայաստանի անդամակցության նպատակով միջոցառումների ծրագրի (ճանապարհային քարտեզ) իրականացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը: Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը տեղեկացրեց, որ ճանապարհային քարտեզով նախատեսվում է իրականացնել 262 միջոցառում, որից 150-ը պետք է կատարվի մինչ Մաքսային միությանն անդամակցելը:

ՁՈՐԵՆԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ՆԿԱԶԵԼ Է

Հայաստան ներկրվող ցորենի ծավալը 2013 թվականին 2012թ.-ի համեմատ նվազել է 27,66 տոկոսով եւ կազմել 345 հազար 571,8 տոննա: Ներկրված ցորենի կիլոգրամի մաքսային միջին արժեքը կազմել է 128,4 դրամ: 2012 թվականին հիմնականում Ռուսաստանից Հայաստան էր ներկրվել 477 հազար 681 տոննա ցորեն (1 կգ-ն մոտ 112 դրամով): Հայաստանի ցորենի ներքին պահանջարկը տարեկան մոտ 700 հազար տոննա է: Վերջին տարիներին ցորենի համախառն բերքը Հայաստանում դրսևորում է աճի միտում: 2010թ.-ին Հայաստանում ստացվել է 183,5 հազար տոննա ցորենի բերք, 2011թ.-ին՝ 224,1 հազար տոննա, 2012թ.-ին՝ 243 հազար, իսկ 2013թ.-ին՝ 306,5 հազար տոննա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԿԱԶՄԵԼ Է 14 ՀԱԶԱՐ ԳՐԱՄ

Կենսաթոշակների չափի ավելացումից հետո, 2014 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը կազմել է 14 հազար դրամ: Աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար կազմել է 700 դրամ, իսկ տասը տարին գերազանցեց յուրաքանչյուր տարվա համար՝ 450 դրամ: Արդյունքում, միջին աշխատանքային կենսաթոշակի չափը կազմել է շուրջ 36 հազար դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 15 տոկոսով: Հունվարի 1-ի դրությամբ՝ Հայաստանում հաշվառված է 516 հազար 968 կենսաթոշակառու, որոնցից 453 հազար 67-ը՝ աշխատանքային, 58 հազար 747-ը՝ սոցիալական, 5 հազար 154-ը՝ շարքային կազմի զինծառայողության հետ կապված կենսաթոշակ ստացողներ են:

ՄԱՅՐԵՆԻ ԳԱՍԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԳՈՐԶՄԵՆԻՆ

«Հայաստանի միգրացիոն կառավարման կարողությունների ամրապնդում կիզակեպում պահելով վերաինսպեգրմանն ուղղված գործողությունները» ծրագրի շրջանակներում խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն ու Եվրոպական միության «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագիրը ստորագրել են պայմանագիր: Եվրամիության ֆինանսավորմամբ իրականացվող վերոնշյալ ծրագրի միջոցով Հայաստան վերադարձած մեծահասակների եւ երեխաների համար Մանկավարժական համալսարանում կկազմակերպվեն մայրենիի դասընթացներ, որոնք կվարեն բուհի դասախոսները: Դրանով կնպաստեն վերադարձածների ինսպեգրմանն ու մշակութային կապերի ամրապնդմանը:

Եվրամիության ֆինանսավորմամբ եւ 3 տարի ժամկետով իրականացվող «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի նպատակն է աջակցել արժանապատիվ կայուն վերադարձի եւ վերաինսպեգրման գործընթացին, կամավոր կամ իրենց կամքին հակառակ հայ ժողովրդի ներկայացուցիչների սոցիալական եւ տնտեսական վերաինսպեգրմանը, դյուրացնել օրինական միգրացիայի հնարավորություններն ու ամրապնդել միգրացիայի դրական ազդեցությունը Հայաստանի սոցիալական զարգացման վրա:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

27.01.2014. Սուրբ վկաներ եկզենիոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կանդիտոսի ու Ակյուղասի հիշատակության օր

28.01.2014. Սուրբ Անդրեոս զորավարի, նրա բանակի Կալիսիկոսի եւ Դոմենտիոսի հիշատակության օր

ՀՈՒՆՎԱՐ

սի վկաների հիշատակության օր

30.01.2014. Սուրբ Ադրիանոսի եւ նրա կնոջ՝ Անատոլիայի, Թեոդորոս եւ Ելեթյուրոս վկաների հիշատակության օր

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴԻՋԻԹԵՔ 6-ՐԴ ԲԱԾ ԱՏՈՒԳԱՏԵՍ

Թվային միջոցները՝ հանրակրթության արդյունավետ գործիքներ

Աջակից՝ Հայաստանի կրթության եւ գիտության նախարարություն
Կազմակերպիչ՝ Երեւանի «Մխիթար Մեքաստացի» կրթահամալիր
Պաշտոնական կայք www.digitech.mskh.am

Նպատակը՝ հանրակրթության մեջ թվային միջոցների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, մոբիլ եւ ստեղծական ուսուցման փորձի ամփոփում, խրախուսում, տարածում:

Անվանակարգերը՝

1. Էլեկտրոնային գիրք, մեդիագրադարանի փաթեթ, 2. Ինտերակտիվ դաս, 3. Ուսումնական նյութ, այդ թվում՝ հեռավար ուսուցման, Notebook ծրագրով, 4. Մեդիակրթության մոդ գործիքի, միջոցի յուրացում-կիրառում, 5. Մանկավարժական հոդված, 6. Մեթոդական-մանկավարժական թարգմանություն, այլոց փորձի ուսումնասիրություն-ներկայացում, 7. Ուսումնական բլոգ, կայք, էջ, 8. Առցանց TV, TV, Radio and Video Art, 9. Գործուն աջակցություն Հանրակրթական Դիջիթեքին, 10. Հանրակրթական Դիջիթեքի տարածում, 11. Ուսումնական նախագծերի ամփոփում-ներկայացում. արդյունքներ, 12. Ուսումնական-ստեղծագործական հավաքի, պլեների, ծամբարի նախագիծ, 13. Դիջիթեքը հիմնական դպրոցի շրջանավարտի գործիք, 14. Դիջիթեքն ընտանիքում, 15. Դիջիթեքը լրացուցիչ կրթության գործիք, 16. Հեքիաթասաց Դիջիթեք, 17. Ամառորի, Սուրբ Ծննդյան Դիջիթեք, 18. Դիջի-համերգ, Դիջի-ծես, 19. Աշխատողի, սովորողի, ծնողի ուսումնական գործունեության դիջիպատում 2013-2014, 20. Դիջի-էկո ծնեռ:

Միմչել փետրվարի 3-ը՝ մրցութային նյութերի հրապարակում ուսուցիչների եւ սովորողների բլոգներում, անհատական կայքերում, mskh.am-ում, այլ օցցանցե-

րում. անհատական, խմբային, դասարանական, դպրոցական, ընտանեկան մասնակցության հայտերի ընդունում: Ընդունվում են Հանրակրթական դիջիթեք 5-րդ ստուգատեսից՝ 2013թ. փետրվարի 9-ից հետո ստեղծված նյութերը, որոնք բավարարում են ստուգատեսի՝ ըստ անվանակարգերի ներկայացված պահանջներին: Հանրակրթական դիջիթեքի մրցանակը ստեղծագործական ծամբարի ուղեգիրն է: Հատուկ, խրախուսական, անվանական մրցանակներ հայտարարում եւ հանձնում են նախածեռնող անհատները, խմբերը, կազմակերպությունները: Ցուցադրության եւ մրցութային նյութերի հրապարակում digitech.mskh.am կայքում, մեթոդական հոդվածների հրապարակում dpir.mskh.am մանկավարժական ամսագրում: Կրթահամալիրը արտերկրից ներկայացված հայտի եւ հոդվածի հայերեն թարգմանությունն ապահովվում է:

Փետրվարի 3-ին՝ ստուգատեսի պաշտոնական բացումը, **փետրվարի 7-ին՝** պաշտոնական փակում, մրցույթի ամփոփում, մրցանակների հանձնում: **Փետրվարի 4-6-ը՝** դիջիթեքյան բաց պարապմունքներ, կլոր սեղաններ, ցուցադրություններ, ներկայացումներ, մրցութային հանձնաժողովի աշխատանք:

Փետրվարի 8-ին՝ դիջի-դափամայի ծես: Ցանկացողները կօգտվեն կրթահամալիրի հյուրատնից: Կրթահամալիր կրթական բոլոր օբյեկտներում մշտապես գործում է անլար ինտերնետ:

Հանրակրթական Դիջիթեք 2014-ի տնօրեն՝ Լուսինե Բուշ (374)93-24-50-25

Երեւան, ՀԱՋ Բ-1 թաղամաս, Բաֆֆի

57

Տեղեկատու՝ (374) 10-74-72-46, (374)91-

43-10-99

Էլեկտրոնային հասցե՝ digitec@mskh.am

ՀԱՄԱՅՆՔ

ՈՂՋՈՒՅՆ, «ԱՐՁԱԳԱՆՔ»

«Արծազանք»՝ այսպես է կոչվում հայալեզու մոդ թերթը, որի անդրանիկ համարը լույս տեսավ ս.թ. հունվարի 20-ին, Թբիլիսիում: Ինչպես գրում է թերթը, այն լույս կտեսնի մեկ տարի, ամսական երկու անգամ: Թերթը հրատարակվում է «Բաց հասարակություն-Վրաստան» հիմնադրամի աջակցությամբ, «Քաղաքացիական մասնակցություն՝ երկխոսության միջոցով» նախագծի շրջանակներում:

Թերթի ներկայացմամբ «Արծազանքի» առաքելությունն է դառնալ համայնքի կյանքի լուսաբանողը, զանգվածներին հաղորդակից դարձնել հոգեւոր կյանքին ու միջկրոնական հարաբերությունների առօրյային, պատմել վրաց-հայկական հարաբերությունների տարբեր տեսանկյունների,

ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ՝ ԴԻՏԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱՆՏՄԱՆ ՀԱՄԱՐ

2014 թվականի հունվարի 1-ից սկսել են գործել պարենամթերքների պիտակավորման կանոնների խախտման համար սահմանված տուգանքները: Սկզբնական փուլում տուգանքը կազմում է 400 լարի:

Իրավախախտման կրկնության դեպքում, այն հասցվում է 1200 լարի: Վրաստանի օրենսդրությունը սահմանում է նաեւ, թե ինչպիսին պետք է լինի եւ ինչ տեղեկատվություն պետք է պարունակի պարենամթերքի պիտակը:

Հիշեցնենք, որ 2012 թվականի մայիսից սույն պահանջների խախտման համար տուգանքներ

Հայկական սփյուռքի նորությունների, հայ մարդու առաջընթացի ու խնդիրների մասին:

«Վրաստան»-ը շնորհավորում է մոդ թերթի լույսընծայումը եւ նրան մաղթում արգասաբեր ստեղծագործական գործունեություն:

ՋՐԵԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒ ԲՈՆԱԳՐԱՎԿԵՆ ՄԵԾ ԶԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԹՄՐԱՆՅՈՒԹ

Հայկական մաքսակետի աշխատակիցները, Իրանից Վրաստան ուղեւորվող բեռնատար մեքենայում հայտնաբերել են շուրջ 1 տոննա հերոին: Մեղրիի անցակետում բռնագրավված թմրամյութի շուկայական արժեքը, մոտավոր հաշվարկներով, կազմում է 100-200 միլիոն դոլար:

927 կիլոգրամ հերոինը հայտնաբերվել է այն բեռնատարում, որի վարորդը Վրաստանի քաղաքացի Ավթանդիլ Մարտիաշվիլին է: Այն իրականացնում էր բեռնափոխադրումներ թուրքական ընկերության պատվերով:

ՀՐԱՅՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ

Ախալքալաքի շրջանի Արագվա գյուղի բնակիչ Արտակ Գ.-ն Վրաստանի ՆԳ մախարարության Սամցխե-Ջավախեթիի գլխավոր վարչությանը կամավոր հանձնել է որսորդական իրացանք, տարբեր տրամաչափի 318 մարտական փամփուշտ, 4 նռնակ:


Կամավոր իրազեկ է հանձնել նաեւ Նինոծմինդայի բնակիչ Սամվել Ա.-ն: Նա ոստիկանությանն է հանձնել հակատանկային 12 ական եւ ինքնաձիգի 12 փամփուշտ:

Վերոնշյալ փաստերով հետաքննություն տարվում է Վրաստանի քրեադատավարական օրենսգրքի 2369 հոդվածի առաջին մասով:

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը խորվշտով հայտնում է միության անդամ, բանաստեղծ

Հովհաննես Ջաքարի ՍԱՐԳՍՅԱՆԻ

մահը եւ ցավակցում հանգուցյալի ընտանիքին ու մերձավորներին:



	1		2		3		4		5		6
7							8	9			
					10				11	12	
	13	14					15				
16					17						
				18			19	20	21		22
	23		24			25		26			
27							28				
			29		30		31				
32					33				34		35
			36						37		38
39					40	41			42		
			43					44			
	45				46				47		

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՅՈՆԱԿԱՆ

7.Եկեղեցական ստորին պաշտոնյա, դպիր: 8.Արաքների եվրոպական անվանումը՝ հին եւ միջին դարերում: 10.Նույնպիսի: 11.Ամերիկայում ավտոմեքենա: 13.Իտալական ավտոմեքենա: 15.Աշխարհահռչակ ռեժիսոր, սցենարիստ եւ պրոդյուսեր ... Սփիլբերգ: 16.Քնահատ: 17.Իտալացի ֆուտբոլիստ Ֆրանչեսկո ...: 19.Ետ մղել, վտարել: 23.Ռուս ճանապարհորդ Նիկոլայ ...-Մակլայ: 26.Բացառությամբ, զատ: 27.Փաստացիորեն, դե ...: 28.Կրաքարի կտոր՝ գործածվող ներկելու, գրելու եւ այլ նպատակներով: 29.Գյուղ Հայաստանի Սյունիքի մարզում: 32.Անտառի խիտ, մուր տեղ: 33.Մաքուր սպիտակություն՝ դեմքի եւ մաշկի: 36.Սերբ թեմիսիստոսի, աշխարհի նախկին առաջին ռակետ եւ «Մեծ սաղավարտի» չեմպիոն ... Իվանովիչ: 37.Բնական եղանակով հայտնվող դյուրավառ հեղուկ: 39.Քիմիական տարր, դեղնականաչավուն հեղձուցիչ գազ: 40.Վրաց ռեժիսոր, սցենարիստ ... Գելաշվիլի: 42.Ծանրության ռուսական չափ: 43.Քաղաք Դաշտային Կիլիկիայում: 44.ԱՄՆ երգչուհի: 45.Գետ Ռուսաստանի մասում: 46.Երկու

կողմից սրված մետաղյա ձող, որով քանդում եւ փորում են: 47.Ամերիկացի տիեզերագնաց ... Արմսթրոնգ:

ՈՐԴՆԱՅՆՅԱՆ

1.Երկու ծայրերի մեջտեղը գտնվող, միջակ: 2.Հավերժ: 3.Թույնի մեջ թաթախված: 4.Մտքով ընկալելի բովանդակություն, միտք: 5.Ցիրուցան, խառնիխուռն: 6.Անգլիացի մանկական գրող, բանաստեղծ Ալան Ալեքսանդր ...: 9.Անհամար, բազմաթիվ: 12.Սիրուն, գեղանի: 14.Հայ ծանրորդ ... Ավետիսյան: 18.Բռնի կերպով ձեռքից վերցնող, զավթող: 20.Քաղաք Իրանի հարավ-արեւմուտքում, Խուզիստանում: 21.Ծովային տրանսպորտ: 22.Երկրի մակերեսային ջրով լցված զոգավորություն, որը կապված չէ օվկիանոսի հետ: 23.Մրգանուշ: 24.Աստվածաշնչի կամ Ավետարանի բաղկացուցիչ մաս: 25.Ծիծաղի (ժող.): 30.Հապաղել, ետանալ: 31.Եշմարիտ, հավաստի: 34.Կապան քաղաքը՝ հնում: 35.Ծլել, ծաղկել: 38.Ամերիկյան նշանավոր ռեժիսոր, սցենարիստ, գրող ... Ալլեն: 41.Մեսրոպյան այբուբենի տառ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱՔԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱԶԲՈՒ ԴԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՅՈՆԱԿԱՆ

5.Հոլ: 9.Երգ: 11.Եվա: 12.Վալս: 13.Գրող: 14.Տող: 15.Սկունդ: 17.Սայլ: 18.Նման: 19.Ռենտա: 22.Ֆուտբոլ: 25.Կորսիկա: 26.Քարտեզ: 32.Ներկարար: 33.Վերնագիր: 34.Խորիզ: 36.Վերա: 37.Ոգնի: 40.Շապուհ: 44.Դամակոս: 45.Արեգ: 46.Կին: 49.Անկարա: 51.Պարկեշտ: 52.Եղանակ: 56.Խրճիթ: 59.Նոտա: 60.Ծնող: 61.Նիցցա: 64.Նուռ: 65.Շափի: 66.Օր: 67.Նոյ: 68.Կոճ: 69.Ցիխ:

ՈՐԴՆԱՅՆՅԱՆ

1.Սպանդ: 2.Վոլեյբոլ: 3.Կերամիկա: 4.Մատուռ: 5.Հողմ: 6.Լեզու: 7.Թվիստ: 8.Աղանդ: 9.Եղան: 10.Գաթա: 16.Կկու: 20.Տրե: 22.Ֆիլանդիա: 23.Տորթ: 24.Ողակ: 27.Անո: 28.Տոգ: 29.Ձորանամակ: 30.Քաթելոն: 31.Զեռնարկ: 34.Խաշ: 35.Ջոն: 38.Օմսկ: 39.Մուր: 41.Պոկա: 42.Տգեղ: 43.Ական: 47.Փայտահատ: 48.Նշանաբան: 50.Նոր: 53.Այց: 54.Անաշա: 55.Աղցան: 56.Խցիկ: 57.Ճանճ: 58.Թառափ: 61.Նանիկ: 62.Ցույց: 63.Ածուխ:

**Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ**

**Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net**

**Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն**

**“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445**